

—≡ Ս Ի ՈՒՆ ≡—

12. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1962

« Ապրիլ-Մայիս »

Թիւ 4-5

ԽՐԲԱԳՐԱԿԱՆ

ՍՐՏԱԳԻՆ ԿՈԶ ԲՈՎԱՆԳԱԿ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՐ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Ազգիս աստուածարեալ Հայրապետը, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Սփիւռքի բովանդակ հայութեան ուղղած իր որբատառ կոնդակով, սրտագինս կը հրաւիրէ Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր հարազատները, որ աւագ պարտականութիւն նկատեն Երուսաղէմի Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան գործին բերելու իրենց լիակատար մասնակցութիւնը:

Նուիրական պարտաւորութեան այս հանդիսաւոր առիթով, միացնելով մեր տկար ձայնը ազգիս Վեհին սրտագին կոչին, կը հրաւիրենք Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր զաւակները, կազմակերպութիւններն ու Հաստատութիւնները, որ քաղցր յօժարութեամբ կատարեն հայու իրենց այս նուիրական պարտքը:

Մեր երախտաւոր նախնիք, աւելի քան ԺԶ. դարեր, ի զին գերագոյն գոհողութիւններու ըրած են իրենց լաւագոյնը Ս. Երկրին մէջ ապահովելու իրենց հաւատքին ու արեան զինը եղող հոգեւոր և ազգային այս ժառանգութիւնը: Այժմ մերն է կարգը ընելու մեր կարելին՝ պահելու և մեր յաջորդներուն յանձնելու ազգին այս պարծանքը: Ասիկա միայն եկեղեցական ու ազգային պարտականութիւն մը չէ, այլ նաև փառք մը միջկրօնական և միջազգային այս նուիրական ոստանին մէջ:

Նիւթական պահանջը նորոգութեան այս գործին համար, աննախընթացօրէն մեծ է, սակայն ոչ անկարելի: Մեր ժողովուրդը, որուն կեանքը գոհողութիւններու շարք մըն է եղած դարերով, բնաւ չէ թերացած իր նուիրական

զղացումներու և պարտախանութեան հեղումին մէջ, և զիտցած է տալ միշտ իրմէն՝ իրեն:

Հաւաքակոչումների գլխին է որ կ'ապրինք, հաւաքական ճիգերու և զիտակցութեան զոհաբերումներով միայն իրենց յաջողութեան աւարտին կրնան յանգիլ այս կարգի մեծ և բազմապահանջ ձեռնարկներն ու պարտականութիւնները:

Ի մտի պէտք ենք ունենալ որ Հայ ժողովուրդը ոչ միայն աշխօր, այլ նոյնիսկ անցեալի մէջ չէ ունեցած և չունի սրբազայր մը, որ կարենայ հաւատարիկ երուսաղէմի Ս. Յակոբեանց ժառանգութեան:

Ա. Տեղեաց գաբաւոր մեր իրաւունքներով եւ ռեփականութիւններով, առնոց կրօնական աւագոյի յարժէքներով, իբրեւ ուխտաւայր քրիստոնեայ Հայ սեռունդներու Յերուսաղէմի Աթոռը կը գրաւէ տեղ մը, որուն կրօնական տարածք հոգիներու վրայ վեր կը մնայ ամէն չափերէ եւ բազդատութիւններէ :

Հայրենիքէն հեռու, բայց սրբութեան գերագոյն կեդրոնին մէջ, Ս. Յակոբը իր Մայրամանքով, մեր Տիրով Ս. Յարութեան և Ս. Մննդեան Տաճարներով, և ուրիշ Սրբատեղիներու իր իրաւունքով, է, և կը ֆայ մեր Տիրոջ անշիջանելի լոյսին ու հաւատքին կանթեղը Սիոնի բարձունքին՝ և հայուն հոգեկան աշխարհին վերև մշտադաւ ու պայծառ։ Այդ լոյսը մեր ազգին միխթարութիւնը, պատիւն ու պարծանքն է։ Հայ երեսօպէմի պահպանութիւնը Տիեզերական Երեսօպէմին մէջ, պէտք է ըլլայ մեր ազգասիրական գերագոյն պարտականութիւնը, որովհետեւ հոգևոր այս ժառանգութիւնը Տունն է ազգին։

«Եթէ մոռացայ զքեզ, Երուսաղէմ, մոռացի զիս ալ իմ», Սաղմոսեր-
գունին խօսքը հարկ է որ արձագանգէ ամէն հայտւ որտեղ մէջ, որպէսզի Հիւր-
ժանի մեր ներսը այն զօրութիւնը, որ մեր ազգային պահպանութեան և շինու-
թեան միակ ազգական է եղած:

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ», կ'երգէ Եկեղեցւոյ քնարը՝
Որեւ ժամանակէ աւելի ներկայիս համար կարծես արժէք ունի հրաւերի այս
երգը: Ահնրաժեշտութիւն է որ ամբողջ հայութիւնը սիրտ սրտի մօտեցուցած եւ
ձեռք ձեռքի խօսնելով, ընէ իր կարելին, մեր Տիրոջ հրաշալոյս Գերեզմանի,
Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան սրբազան ու սրտանուէր տուրքը զու-
յացնելու:

Վստահ ենք թէ արտասահմանի մեր եկեղեցանուէր ու ազգասէր հայու-
թիւնը թոյլ պիտի չտայ ինքզինքին որ Լուսաւորչի և Տրդատայ, Վլայտսէրի և
Պահլաւունեաց, Բազրատունեաց և Ռուբինեանց շինութիւններով, աւանդու-
թիւններով և յիշատակներով սկզբնաւորուած և պայծառացած, ինչպէ՞ս նաեւ
Պարոնտէրներու, Շլթայակիրներու և իրենց արժանաւոր յաջորդներու բարի
ջանքերով արդիւնաւորուած այս հրաշալի Տունը ազգին, դադրի իր դարաւոր

դերէն, որովհետեւ Ս. Երկրի մէջ մեր գոյութեան կառոյցն ու իրաւունքը, իր լոյսն ու ներշնչումը կը ստանայ Ս. Յարութեան Տաճարէն, մեր Տիրոջ հրաշալոյս Գերեզմանի խորհուրդէն:

Օն ուրեմն, ժողովուրդ Հայոց որ ի սփիւռս աշխարհի, եղիր զոհաբերք և պողաբեր, նման աստուածասէր քու նախնեաց, զի Տէր Աստուած անպտղատու ժողովուրդներուն արմատները, նոյնիսկ եթէ անոնք ըլլան հաստաբուն, արմատախիլ կը բառնայ աշխարհէս:

Շրջափոխելով մարդարէին խօսքը, կ'ըսեմ քեզի, ժողովուրդ Հայոց, դարձ, նայեա, տես և այց արա սրբազան այգւոյս այսմիկ, և դարման տար սմա: Անտէրունջ մի՛ թողուր Ս. Յակոբայ հոգևոր այգիին կենսատու ծառը, Ս. Յարութեան տիեզերալոյս Տաճարին վերանորոգման գործը, և վստահ եղիր թէ քու տուած մէկի փոխարէն հարիւրապատիկ պիտի ստանաս: Վասնզի ըստ Աւետարանի անսուտ խոստման, բաժակ մը սառ շուրն անգամ անվարձ չի մնար:

Ինչ որ ընենք Ս. Յարութեան Տաճարի նորոգութեանը համար, Հայ Եկեղեցիին ըրած կ'ըլլանք: Այն Եկեղեցիին՝ որ հոգևոր ու հարազատ Մայրն է եղած մեր բոլորին, անաղարտ պահելով այն ամէնը որ հայեցի է, որ սուրբ է, որ սկիզբն է եղած մեր բոլոր ուրախութիւններուն և տրտմութիւններուն, աղբիւրը մեր բոլոր յոյսերուն և երազներուն: Առանց Հայ Եկեղեցւոյ չեմ զգացումին, մենք հազիւ թէ հայ ենք:

Սիոնի նուիրական բարձունքին վրայ տաղաւարուած Հայ Երուսաղէմը այն սրբազան տապանակն է այսօր, որուն մէջ պահուած է հազար տնգամ նահատակուած բայց յաւերժ կենդանի ազգի մը մխիթարութեան և հաւատքի մուրհակը: Ան այսօր համագործութիւնն է հին ու նախկին մեր բոլոր վանքերուն, և կոչուած է ժամանակի պահանջներուն համաձայն ընելու, ինչ որ անոնք ամէնքը, միասին կամ յաջորդաբար, ըրին հետգնետէ դարերու ընթացքին:

Երկնաւոր Բանանայապետն Յիսուս Քրիստոս սրբազան Իր այս կայքէն թող շնորհէ մեզի բոլորանուէր զոհաբերման այդ լուսաւոր զգացումը, որպէսզի ի հաստատութեան և ի պայծառութեան մնայ Ս. Յարութեան աշխարհամատուռ Տաճարը, ի փառս Աստուծոյ Բարձրելոյ և ի մխիթարութիւն ազգիս մերոյ սիրելոյ:

Ողջոյն սիրոյ ամէնուդ՝ ի ծառայէս Աստուծոյ, և օրհնութիւն ամենայն Սրբատեղեաց Սրբոյ Քաղաքիս և ի Սրբոյ Առաքելական Աթոռէս:

Աղօթարար

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարք Երուսաղէմի

30 Մայիս 1962

ի վանս Սրբոց Յակոբեանց
Երուսաղէմ